ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

С. А. МЕЛКУМЯН, Индустрия камня Армянской ССР, Изд-во «Айастан», Ереван, 1984, 221 с.

Ս. Ա. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ, Հայկական ՍՍՀ քարի ինդուստրիան, «Հայաստան» հրատարակչություն, Երևան, 1984, 221 էջ։

Հայաստանի ընդերքի հարստությունների ռացիոնալ օգտագործման պրոբլեմի շուրջ վերջի տարիներին հրատարակվել են մի շարք ուշագրավ հետազոտություններ։ Դրանց շարքում ուրույն տեղ ունի Ս. Մելքումյանի «Հայկական ՍՍՀ քարի ինդուստրիան» մենագրությունը։ Նրանում համակողմանի հետազոտված են Սովետական Հայաստանի ընդերքի հարբստություններից ոչ մետաղային օգտակար հանածոների ռացիոնալ, նպատակային, խնայողական օգտագործման և տնտեսաշխարհագրական ամբողջական գնահատման հարցերը, բացահայտված են բնական քարանյութերի տեղն ու դերը ինչպես ամբողջությամբ հանրապետության էկոնոմիկայի, այնպես էլ դրա առանձին ճյուղերի ձևավորման, զարգացման, տնտեսական ու սոցիալական մի շարք խնդիրների լուծման գործում։ Հարցերի այս կոմպլեքսի շրջանակում մենագրության մեջ առավել ուշադրության են արժանացել հանրապետության ոչ մետաղային օգտակար հանածոների բնութագրումն ու տեղաբաշխումը, առանձին քարանյութերի ֆիզիկատեխնիկական հատկանիշների, կիրառման ոլորտների և հետախուզված պաշարների շարժի ուսումնասիրումը, Հայկական ՍՍՀ քարային ինդուստրիայի առանձին ճյուղերի արդյունավետ զարգացման ուղղությամբ հանձնարարականների մշակումը։

Հայտնի է, որ մեր հանրապետությունը հարուստ է տուֆի, բազալտի, դրանիտի, կրաքարի, թեթև լցանյութերի (հրաբխային խարամների, պեմզաների, պեոլիտների և այլն), բենտոնիտային կավերի, հանքային ներկանյութերի, ոչ մետաղային , այլ օգտակար հանածոների պաշարներով, որոնց բազալտի վրա ստեղծվել են արդյունաբերության տարբեր ճյուղերին պատկանող մի շարք արտադրություններ և ձևավորվել Հայաստանի քարի ինդուստրիան, ուր գերակշռողը շինանյութերի արտադրությունն է։

Ս. Մելքումյանը, հետազոտելով արխիվային և վիճակագրական նյութեր, մասնագիտական համապատասխան գրականություն, բացահայտում է Հայաստանի շինանյութերի արդյունաբերության պատմական զարգացման ու տեղաբաշխման առանձնահատկությունները, շինանյութերի արտադրության և շինարարական ինդուստրիայի զարգացման ժամանակագրական հիմնական փուլերը, պատմական տարբեր ժամանակաշրջաններում ոչ մետաղային օգտակար հանածոների կիրառման հիմնական ոլորտները։ Ինչպես ընդգծվում է մենագրության մեջ, նախասովետական ժամանակաշրջանում Հայաստանի բնական քարանյութերի հայտնի պաշարներն օգտագործվել են ոչ մեծ չափերով և դրանցից միայն մի քանիսն են (հիմնականում բազալտը, տուֆը, և կրաքարը) այս կամ այն չափով կիրառվել շինարարության մեջ՝ շենքերի ու քաղաքների, եկեղեցական շինությունների կառուցապատման համար։ Հանրապետության ընդերքի հարստությունների, այդ թվում նաև ոչ մետաղային օգտակար հանածոների համակողմանի ուսումնասիրումը, դրանց հանքավայրերի հայտնաբերումը, երկրաբանական հետախուզությունը և մեծ չափերով արտադրական ոլորտ ընդգրկումը, ինչպես ցույց է տրված մենագրության մեջ, համընկնում է Հայաստանի պատմական զարգացման սովետական ժամանակաշրջանի, մասնավորապես արդյունաբերության, բնակարանային և կոմունալ շինարարության զարգացման բուռն վերելքի և ինդուստրացման ժամանակաշրջանի հետ։ Դա էլ հենց պայմանավորում է ոչ մետաղային օգտակար հանածոների օգտագործման գլխավոր ուղղությունը, այն է՝ հիմնականում որպես շինանյութի կիրառումը և հանրապետության շինանյութերի արդյունաբերության ճյուղի կազմավորումը։ Այս ճյուղի հետագա զարգացումը հեղինակը դիտարկում է հանրապետության արդյունաբերական համալիրում նրա գրաված տեղի ու դերի, ոչ մետաղային հումքի տեսակների հայտնաբերված պաշարները ժո-

ղովրդական տնտեսության տարբեր ոլորտներում օգտագործելու հնարավորության, շինարարության մեջ գիտատեխնիկական առաջընթացի արագացման գործում դրանց ունեցած նշանակության տեսանկյունից։ Ելնելով «բնական քարանյութերի արդյունահանման, մշակման և վերամշակման բնագավառում գիտագործնական նվաճումներից, հրաբխային քարանյութերի քանակական ու որակական բացառիկ ցուցանիշներից, ինչպես նաև երկրի և հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ դրանց ներկա ու ապագա դերից» (էջ 132), հեղինակը հիմնավորում է, որ քարի արդյունահանման, մշակման ու վերամշակման պրոցեսները պետք է ոչ թե ներառել «շինարարական» կամ «ինդուստրիալ-շինարարական» ցիկլերում և սահմանափակվել դրանով, այլ անհրաժեշտ է Հայկական ՍՍՀ արտադրական-տարածքային համալիրում առանձնացնել նաև «բնական քարի արտադրական ցիկլ» (էջ 131—133)։ Այդպիսի մոտեցումն ինքնանպատակ չէ։ Հանրապետության բնական քարանյութերի ներառումը սոսկ «շինարարական» կամ «ինդուստրիալ-շինարարական» ցիկլերում նախադրյալներ է ստեղծում նյութական արտադրության ոլորտում այդ կարևորագույն հումքի ունեցած նշանակության ոչ ճիշտ գնահատման համար։ Մինչդեռ հանրապետության բնական քարանյութերը, ինչպես նշվեց, որպես շինանյութ ծառայելուց բացի, կարող են դառնալ հումք արդյունաբերության տարբեր ճյուղերում նոր արտադրությունների կազմակերպման ու զարգացման համար։

Հետազոտելով երկրի և մեր հանրապետության շինանյութերի արդյունաբերության կառուցվածքն ու առանձին արտադրությունների տեխնիկատնտեսական ցուցանիշները, մենագրության մեջ ցույց է տրվում, որ բնական շինանյութերի արտադրության բնագավառում մեր հանրապետությունը ՍՍՀՄ-ում գրավում է առաջնակարգ տեղ, իսկ հրաբխային խարամների, պեմզանյութերի, տուֆի և բազալտի սալիկների ու մի շարք այլ արտադրատեսակների գծով երկրի միակ մատակարարն է։ Դրա հետ մեկտեղ պարզվում է, որ հանրապետության բնական շինանյութերի արտադրության ենթաճյուղերում ինչպես միջին միութենական, այնպես էլ ենթաճյուղերի համեմատ արտադրության ավտոմատացման ու մեքենայացման զգալի ցածր մակարդակի պայմաններում արտադրության արդյունավետությունը բնութագրող հիմնական ցուցանիշները (աշխատանքի արտադրողականություն, ֆոնդահատույց, շահութաբերություն և այլն) բավականին բարձր են ինչպես միութենական այլ հանրապետությունների (Վրացական ՍՍՀ, Ադրբեջանական ՍՍՀ և այլն), այնպես էլ միութենական միջինացված համապատասխան ցուցանիշներից։

Տուֆի, բնական թեթև լցանյութերի, բազալտի, խճաքարի, բնական այլ քարանյութերի հանքավայրերի հետախուզված պաշարների, արդյունահանման ծավալի, դրանցից ստացվող արտադրատեսակների ժողովրդատնտեսական պահանջարկի, թողարկված արտադրանքի ինքնարժեքի ու կապիտալատարության մասին աշխատանքում ամփոփված տվյալների մանրամասն վերլուծության միջոցով հեղինակը կատարում է մի շարք ուշագրավ հանձնարարականներ՝ հանրապետության քարային ինդուստրիայի հետագա զարգացման, դրա առանձին արտադրությունների տեղաբաշխման, քարանյութերի արդյունահանման, հետագա վերամշակման ու բազմանշանակ օգտագործման, գիտատեխնիկական առաջընթացի արագացման, միջհանրապետական կապերի հետագա զարգացման և արտադրության ժողովրդատնտեսական արդյունավետության բարձրացման ուղիների բացահայտման ուղղությամբ։ Գործնական հետաքրքրություն են ներկայացնում նաև հանրապետության ոչ մետաղային ռեսուրսների համալիր օգտագործման, շինանյութերի արտադրության մասնագիտացման, համակենտրոնացման խնդիրների հետազոտումն ու հանձնարարականները։ Գրքում հիմնավորվում է հանրապետության բնական քարի շահագործվող հանքավայրերի շրջակայքում կուտակված թափոնների բաղայի հիման վրա թեթև լցանյութերի արտադրության կազմակերպման նպատակահարմարությունը Արթիկում, Կարմրաշենում (Թալինի շրջան), Արարատում, Արովյան-Զարենցավան հանդույցում և այլուր։

Ս. Մելքումյանի մենագրությունը զերծ չէ նաև բացթողումներից։ Այսպես, նրանում որոշակի տեղ է հատկացված Հայկական ՍՍՀ բնական քարանյութերի տնտեսաաշխարհագրական գնահատման հարցերի քննարկմանը (առաջին գլուխ)։ Այդպիսի գնահատման հիմնական նպատակը չվերականգնվող բնական այդ ռեսուրսների ռացիոնալ ու խնայողական օգտագործման ապահովումն է։ Դրա համար անհրաժեշտ էր հիմնավորել գնահատման համապատասխան չափանիշ, ցուցանիշների այնպիսի համակարգ, որը հնարավորություն ընձեռեր քանակապես գնահատելու օբյեկտի (հանքավայրի) ինչպես երկրաբանական, լեռնատեխնիկական, տնտեսաաշխարհագրական և այլ առանձնահատկությունները, այնպես էլ այն գոր-

ծոնների ազդեցությունը, որոնք այս կամ այն կերպ պայմանավորում են տվյալ քարտեզագրությունը արտադրական ոլորտ ընդգրկելու ժողովրդատնտեսական արդյունավետությունը։ Այսպիսի գնահատման դեպքում բերված տնտեսաաշխարհագրական գնահատումները կլինեին ավելի համոզիչ։ Գրախոսվող մենագրության մեջ հանրապետության բնական քարանյութերի համալիր օգտագործման ուղիները հիմնավորելիս չեն բերված համապատասխան հաշվարկներ, որոնք հիմնավորեին դրանց տնտեսապես շահավետ լինելը։ Միշտ չէ, որ պահպանվել է ներքին օրգանական կապ աշխատանքի առանձին գլուխների միջև։

Նշված բացերով հանդերձ գրախոսվող մենագրությունը հանրապետության ոչ մետաղային ռեսուրսների տնտեսաաշխարհագրական պրոբլեմների կոմպլեքս հետազոտության արդյունք է։ Նրանում բարձրացված հարցերն ունեն գիտագործնական նշանակություն, իսկ մի շարք հանձնարարականների իրականացումը մեծապես կնպաստի հանրապետության ընդերքի հարստությունների ռացիոնալ օգտագործման պրոբլեմի լուծմանը, հանրապետության ժողովրդական տնտեսության նյութական արտադրության ոլորտի ճյուղերը տեղական հումքային բազայով ապահովելուն և արտադրության արդյունավետության հետագա բարձրացմանը։ Գիրքը կարող է օգտակար լինել պլանային մարմինների և հանքարդյունաբերական համալիրի տարբեր օղակներում աշխատող մասնագետներին՝ Հայկական ՍՍՀ սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարային պլանները կազմելու, գիտատեխնիկական առաջընթացի նպատակային կոմպլեքսային ծրագրեր մշակելու և հանրապետության հանքարդյունաբերական համալիրի կառուցվածքի հետագա կատարելագործման և այլ խնդիրներ լուծելու գործում։

ԲՅՈՒԶԱՆԴ ՍԵԼՎԻՆԱՋՅԱՆ
Տեսաբանագիտության թեկնածու